

ՆՈՂԻՏ.

Խեղճուկ ծղրիտ մի տրկար

Գոյն գոյն ծաղկանց մէջ պահած,

Եւքին ծայրովն անդադար,

Գիտէր վառեալ ի նստանձ,

Թիթեռնիկ մի թեթեւօղի գեղորակ,

Ար թռչրտէր օդուն մէջ լայն և արձակ,

Նոզիկէ ծաղիկ կարշաւէր,

Նուրբ թեւերով փալփելուն

Ասկուոյ նրման վառվրէր,

Ընդ լոյս պայծառ արեւուն,

Ենուշահոտ ծաղկանց բոլոր

Արծես ինքն էր թագաւոր:

Խեղճուկ ծղրիտն որչափ դիտէր՝

Արրակ կիյնար սրբափն խոր,

Եւքը արցունք կը հառաչէր,

Ասէր այսպէս ակնկոր,

Եւրկինք ըզսա երկու ձեռք

Չարդարեր է ամեն բարեօք,

Գեղեցկութեամբ աննրման,

Եղատութեամբ անսահման .

Ելլ զիս վայ իմ խեղճ զրլսոյս,

Ասարիմ անձար և անյոյս

Ոչ տեսք ունիմ՝ ոչ հանձար,

Իբրեւ անարգ ինչ բանջար.

Աեանքս մահէս չէ տարբեր,

Եւ ոչ անձիս եմ ես տէր . .

Մինչ դեռ այսպէս անդադար

Նա իր զրլսուն վայ կուտար,

Մէկ ալ յանկարծ չարածիծի,

Խուժմբ մի տըղայք մօտեցան,

Վազվրդէին սուր ձայն ձրզած,

Ձրկանց նրման կրխայտան:

Տեսնաս զրլսարկ և թաշկինակ

Ինքնաբերական օդուն մէջ,

Թիթեռնաց ընդդէմ զրրին բանակ,

Եւլաւ կրօն մի անվերջ . . .

Եւ զժընդակ հալածանքին ժամանակ

Մեր թիթեռն գեղորակ

Գերի ընկաւ թրչնամեաց ձեռք ահաւոր,

Թռուան փառքերն իր բոլոր,

Վասն զի հոն տըղայքն ամեն

Ատաղաբար կանչէին,

Մինը զլիւն՝ միւսը պոչէն,

Մինը թեւէն՝ միւսը ոտքէն,

Ենդուժ սրբտով վերջապէս

Խեղճը արին ողջակեղ

Ո՛հ ո՛հ կասէր ծղրիտն ալ ես չեմ տըխրիր,

Թիթեռն փառաց ո՛չ երբէք չեմ նախան-
ձիր .

Գըժուար է եղեր մարդկանց մէջ փայլել՝

Նոցա չար կրից ողջակեղ լինել .

Եսկէ վերջ կերպնում ես կեանքիս վերայ,

Իմ արած մեղքիս հազար մէկ մեղայ.

Լաւ է միշտ մընալ մութ և միայնակ՝

Քան թէ փալփելուն լինել հըպատակ.

Եւ ի շնչել ազատ օդ

Սիրէ լինել անձանօթ . . . :

Թարգմանաբար յօրինեաց

ԱՌԱՔԵԼ ԱՆՏՅՈՆԵԱՆ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

ԱՆՏՅՈՆԵԱՆ:

ՈՐԲ ՀԱՅ ՏՂԱՆ.

Խուժողութ ազգեր անցան Ենիէն,

Եւ այն պերճ քաղաքն շէնքով ու մարդով

Եւերակի կոյտ դարձաւ մէկ օրէն.

Տեղը զոյացաւ արեան և հրոյ ծով:

Եմեն կողմ դատարկ՝ անապատ լըռին,

Միայն այ մանուկն սե սե աչքերով՝

Վանդաւած սեւացած պարխապի տակին
Նըստած էր արխուր կորացած գըլխով:

Հրակէզ արեւում բոպիկ՝ գըլխաբաց
Սուր ժայռերի մէջ կայրուէր տոչորուէր.
Ըմբիծ ճակատէն քըրտինքը բըխած
Եւքերի խոշոր կայլակին խառնուէր:

Արնայի տարտամ այն աւերակաց,
Արնայի երկար, և իբր երագում
«Մայրի՛կ» կըկոչէ, կըթափի յանկարծ.—
Պիմացն Անին զեռ կըծըխայ արբուում:

— «Ո՛վ զըծբաղդ մանուկ, հոգւոյս իմ հա-
տոր,
Ի՞նչ կուզես քեզ տամ սիրտդ ըսփոփելու,
Եշխարհի անգին զուարճութիւնք բոլոր
Վեզ չեն խընայուիր, ի՞նչ բան կուզես զու:

«Երբեք կուզե՞ն որ գիշերուան զովին,
Երբ ծառ ու ծաղիկ խաղան զեփուռով,
Եւ երկինքն աստղեր մեղմիկ փալկըրին՝
Յաւերըդ բուժեմ անոյշ երգերով:

«Ամ կարմիր արեւն երբ առաւօտուն
Լեռներէն ծագէ, և բիւր գեղգեղներ
Հընչն անտառում, Եխուրեան գետուն
Հեղիկ ծոցին մէջ լըւամ քո վըշտեր:

«Զըքնաղ սեւորակ աչերդ սըրբելու,
Նախկին մանկական ժրպիտդ՝ բոցավառ
Արմիր այտերիդ նորէն դարձնելու,
Աորացած գըլուխդ ուղղելու համար,

Ի՞նչ կուզես, երգեր, խաղալի՛կ, թըռ-
չո՛ւն,
Թէ ճակտիդ նըման շուշան մի ձերմակ...»
— «Վարեկամ», ասաց մանուկը սիրուն,
«Դս կուզեմ միայն մէկ սուր և նիզակ»:

Թարգմանարար

ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

ԱԶԳԱՅԻՆ

ՄԻՒՌՈՅՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ.

Ի 4-ն յառաջակայ Յունիս
ամսոյ, յաւուր տօնի Հոգեգա-
լըստեան, Ս, Միւռօնի օրհ-
նութիւնը պիտի կատարուի:

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ

ՆԱՍՐԷՏՏԻՆ ԺԱՀ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԵԱՅՑ

Ի Ս. ԷԶԻԸԹԻՆ.

Երէկ — ի 29-ն Ապրիլ ամսոյս — Ս.
Էջմիածին եւ սորին գահակալ Վեհ.
Հայրապետ Տ, Տ, Գէորգ Կաթուղիկոս
Ազգիս՝ Արեգակնափայլ Նաորէտտին
Շահի Պարսկաստանեայց թագաւորին
այցելութիւնը ընդունելոյ պատիւը ու-
նեցան:

Նորին Արքայական Մեծութիւնը ի
վաղուց հետէ ըզձացած է Հայաստան-
եայց այս հնազարեան եւ նուիրական
կեդրոնը իւր բարեհաճ այցելութեամբ
տեսնել եւ յարգել:

Այս անգամ Արարատեան աշխար-
հէն եւ Կովկասէն անցանելով դէպ ի Եւ-
րոպա երկրորդ անգամ կատարած ճա-
նապարհորդութեան բարեյարմար առ-
թիւ՝ Երեւան եկած միջոցում յատ-